

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար

2020-2021 ուստարի – 150 թույլե

10-րդ դասարան

1.Վ դարի հայ պատմագրության համառոտ նկարագիրը(10-15

նախադասություն):

Ազաթանգեղոսի «Հայոց պատմություն» մատյանի կառուցվածքը: Գրիգոր

Լուսավորչի գործունեությունը: Պատմության մեջ նկարագրված մյուս

պատմական անձնավորությունները:

5 մ.

2.Ո՞ր պատմիչին են բնութագրում հետևյալ պատվանունները՝Պատմահայր,

Քերթոզահայր, Տիեզերահռչակ: Ի՞նչ գիտես այդ պատմիչի գրական

ժառանգության մասին: Արդիակա՞ն է արդյոք այսօր նրա

ստեղծագործությունը: Գրի՞ր քո կարծիքը և հիմնավորի՛ր:

5 մ.

3.Նարեկա վանքը՝ որպես կրթական կենտրոն: Ի՞նչ գիտես խոսրով

Անձևացու և Անանիա Նարեկացու մասին:

Շարունակի՛ր և վերլուծի՛ր՝

Գոհար վարդն...

5 մ.

4.Մխիթար Գոշ. անվան ծագումը: Ստեղծագործության ընդհանուր

բնութագիրը:«Դատաստանագիրք հայոցը»՝ որպես աշխարհիկ և հոգևոր

օրենքների ժողովածու: Կիրակոս Գանձակեցին Մխիթար Գոշի մասին:

5 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

Ս. Աբազյան